Telcell
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՕՊԵՐԱՑԻՐ
Հեռ.՝ +374 60 27 22 23
Ֆաքս՝ +374 10 56 01 15

«ԹԵԼ-ՍԵԼ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 02 հոկտեմբերի 2015թ.

ՀՐԱՄԱՆ № 39-Լ

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ 02.07.2015Թ. №28-Լ ՀՐԱՄԱՆՈՎ 1.1 ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԹԵԼՍԵԼ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԹԵԼՍԵԼ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՆՈՐ՝ №1.2 ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի թ) ենթակետով, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի ա) ենթակետով, հիմք ընդունելով «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ բաժնետերերի 08.05.2015թ. №05/15 արտահերթ ժողովի որոշումը՝

Հրամայում եմ՝

1. Փոփոխել «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02.07.2015թ. №28-Լ հրամանով 1.1 խմբագրությամբ հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնները:
2. Հաստատել և գործողության մեջ դնել «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնները նոր՝ №1.2 խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «ԹԵԼՍԵԼ» համակարգի ստեղծման թույլտվությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Կից՝ «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնները՝ 42 (քառասուներկու) թերթ:

Գլխավոր տնօրեն՝ Ա. Ազատյան

«ԹԵԼ-ՍԵԼ» "TEJI-CEJIJ" "TEL-CELL" 02703102

Հավելված

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02.07.2015թ. №28-Լ հրամանով 1.1 խմբագրությամբ հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոններում փոփոխություններ կատարելու և «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնները նոր՝ №1.2 խմբագրությամբ հաստատելու մասին 02 հոկտեմբերի 2015թ. № 39-Լ հրամանի

«ԹԵԼՍԵԼ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐ

	Անուն ազգանուն	Պաշտոն	Ստորագր.	Ամսաթիվ
Կազմեց՝	Ռուբեն Սաղոյան	Մարքեթինգի և արտադրանքի մշակման բաժնի պետ		01.10.15թ
Համաձայնեցված է՝	Արտուր Խաչատուրյան	Բիզն. զարգ. վարչ. պետ		01.10.15թ.
	Թամարա Սարգսյան	Ֆինանսական բաժնի պետ		01.10.15թ
	Ելենա Մարյանյան	Գլխավոր հաշվապահ		01.10.15թ
	Սերգեյ Մարգարյան	Անվտանգության ծառ. պետ		01.10.15թ.
	Գուրգեն Գաբրիելյան	Իրավ. բաժնի պետ		01.10.15թ.

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 22 հոկտեմբերի 2015թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ 6
4. ԹԵԼՍԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ 6
5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ 9
6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10
7. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12
8. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12
9. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 13
10. ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼԸ 14
11. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ 14
12. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 15
13. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 16
14. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ 16
15. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ 19
16. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ 21
17. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 22
18. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ 23
19. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԲՈՂՈՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 24
20. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 25
21. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ 29
22. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 30
23. SS ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԷՓԾ ԺԱՄԱՆԱԿ 32
24. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 35
25. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 35

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ընդհանուր դրույթներ «ԹԵԼՍԵԼ» համակարգի մասին.

1.1. «ԹԵԼՍԵԼ» համակարգը (այսուհետ՝ Համակարգ)՝ վճարահաշվարկային (արագ դրամական փոխանցումների) համակարգ է, որի միջոցով իրականացվում են.

1.1.1. ֆիզիկական անձանց դրամական՝ միջոցների փոխանցումներ (այդ թվում ՀՀ տարածքից դուրս), ֆիզիկական անձանց օգտին՝ կանխիկ դրամական միջոցներով վճարման կամ հաշիվներին հաշվեգրման նպատակով;

1.1.2. իրավաբանական անձանց դրամական միջոցների փոխանցումներ (այդ թվում ՀՀ տարածքից դուրս)՝ ֆիզիկական անձանց օգտին՝ կանխիկ դրամական միջոցներով վճարումների կատարման կամ հաշիվներին հաշվեգրման նպատակով:

1.2. Համակարգն իրենից ներկայացնում է վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի՝ կատարման համախումբ՝ սույն կանոնների (այսուհետ նաև՝ Համակարգի Կանոններ) և վերջիններիս կատարումն ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջության ներքո, ինչի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուներին:

Ընդհանուր դրույթներ Համակարգի կանոնների վերաբերյալ.

1.3. Համակարգի Կանոնները կանոնակարգում են Համակարգի գործելու, Մասնակիցների, Համակարգի Օպերատորի համագործակցության կարգը և պայմանները, սահմանում են Համակարգի ստեղծման և գործունեության իրավական և կազմակերպչական հիմքերը, Համակարգին միանալու պայմանները և կարգը, «ԹԵԼՍԵԼ» ծառայությունների տրամադրման և օգտագործման պայմաններն ու կարգը:

1.4. Համակարգի Կանոնների մեկնաբանությունը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում:

1.5. Սույն Կանոնները և դրա հետագա փոփոխությունները հրապարակվում են Համակարգի Օպերատորի պաշտոնական կայքում (www.tel-cell.am):

Հսկողությունը համակարգի կանոնների պահպանման նկատմամբ.

1.6. Համակարգի Կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Համակարգի Օպերատորը, այդ թվում Մասնակիցների գրասենյակների արտագնա

ստուգումների անցկացման, Համակարգի հաճախորդների, ինչպես նաև Մասնակիցների դիմումների ընդունման և մշակման կազմակերպման միջոցով:

1.7. Մասնակիցները պատասխանատվություն են կրում Համակարգի Կանոնների պահպանման համար: Համակարգի Կանոնների չպահպանումը հանդիսանում է Համակարգում մասնակցության դադարեցման հիմքերից մեկը:

2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համակարգում մասնակցության Պայմանագրի տեքստերում ինչպես նաև Համակարգի Կանոններում օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝

2.2. **ԹԵԼՍԵԼ ծառայություններ՝** դրամական միջոցների հասցեական կամ անհասցե փոխանցման իրականացում՝

2.2.1. ֆիզիկական անձանցից՝ առանց հաշիվ բացելու ֆիզիկական անձանց կանխիկ դրամական միջոցներով վճարման կամ հաշվին հաշվեգրման նպատակով,

2.2.2. Իրավաբանական անձանցից՝ առանց հաշվի բացման ֆիզիկական անձանց կանխիկ դրամական միջոցներով վճարման կամ հաշվին հաշվեգրման նպատակով"

2.3. **Համակարգի Օպերատոր՝** «ԹԵԼ-ՍԵԼ» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), որը պատասխանատու է Համակարգի գործունեության համար.

2.4. **Միջնորդավճար՝** ԹԵԼՍԵԼ ծառայությունների մատուցման համար Հաճախորդից գանձվող գումար.

2.5. **Պարգևավճար՝** Հաճախորդներից գանձված միջնորդավճարից Համակարգի մասնակիցներին և Համակարգի Օպերատորին հասանելիք .

2.6. **Հաճախորդ՝** Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կարգադրություն է տալիս Համակարգի Մասնակից-Ուղարկողին իրականացնել դրամական միջոցների փոխանցումը հօգուտ Ստացողի (Շահառուի).

2.7. **Ստացող (Շահառու)՝** Ֆիզիկական անձ, հօգուտ որի ուղարկվել են դրամական միջոցները.

2.8. **Համակարգի մասնակիցներ (Մասնակից)՝** Համակարգի Օպերատորի հետ մասնակցության պայմանագիր կնքած, ՀՀ տարածքում գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, վճարահաշվարկային կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնք իրենց երկրում իրավունք ունեն մատուցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարահաշվարկային և (կամ) նմանատիպ ծառայություններ.

2.9. **Մասնակից-Ուղարկող՝** Մասնակից, որը ընդունում է Հաճախորդի կարգադրությունը (հանձնարարականը) դրամական միջոցների փոխանցումը Ստացողին փոխանցելու նպատակով.

2.10. **Մասնակից-Ստացող՝** Մասնակից, որը իրականացնում է դրամական միջոցների վճարումը/հաշվեգրումը հօգուտ Ստացողի.

2.11. **Հաշվարկային կենտրոն՝** Համակարգի Օպերատորի հետ համապատասխան պայմանագիր կնքած բանկ, որը Համակարգի շրջանակներում Համակարգի Օպերատորի կողմից ստացված տվյալների հիման վրա իրականացնում է վերջնահաշվարկ.

2.12. **ԹԵԼՍԵԼ Ցանց՝** ԹԵԼՍԵԼ ծառայություններ մատուցող Համակարգի Մասնակիցների համախումբ.

2.13. **ԹԵԼՍԵԼ Գործառնություններ (Գործառնություններ)՝** ԹԵԼՍԵԼ ծառայությունների կատարումը ապահովող ընթացակարգեր և գործողություններ (օրինակ՝ միջոցների ակցեպտավորումը փոխանցման, փոխանցման վերաբերյալ տեղեկատվության ուղարկումը, Համակարգի Օպերատորի կողմից փոխանցման վերաբերյալ Մասնակից-Ստացողին տեղեկատվության փոխանցումը և այլն).

2.14. **Համաձայնեցված կապուղի՝** Տեղեկատվության փոխանակման և հաշվարկների համար Համակարգի Օպերատորի և Մասնակցի կողմից սահմանված կապի միջոցներ և եղանակներ.

2.15. **Հեռակառավարվող բանկային սպասարկում (ՀԲՍ)՝** Բանկոմատների, վճարային տերմինալների, ինտերնետ-բանկինգ և այլ հեռակառավարման միջոցներով Մասնակցի կողմից մատուցվող ԹԵԼՍԵԼ ծառայություններ.

2.16. **Երաշխիքային գումար (Կանխավճար)՝** Համակարգի շրջանակներում փոխանցումները իրականացնելու համար՝ Մասնակցի կողմից տրված երաշխիքային գումարը, որի սահմաններում Մասնակիցը կարող է Համակարգով իրականացնել դրամական միջոցների փոխանցում և որը Համակարգի Օպերատորը կարող է օգտագործել Համակարգում վերջնահաշվարկ իրականացնելու համար:

3. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

3.1. Կանոնների նոր խմբագրությունը մշակվում և հաստատվում է Համակարգի Օպերատորի կողմից՝ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունից ելնելով:

3.2. Ենթադրվող փոփոխությունների մասին Համակարգի Օպերատորը տեղեկացնում է Մասնակիցներին, այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելուց առնվազն երկու ամիս առաջ՝ Կանոնների փոփոխությունների նախագիծը իր պաշտոնական կայքում հրապարակելու միջոցով:

3.3. Համակարգի Օպերատորը իրեն իրավունք է վերապահում, Համակարգի Կանոններում կատարվող փոփոխությունների մասին օգտագործել Մասնակիցներին տեղեկացնելու այլ մատչելի միջոցներ, այդ թվում Համաձայնեցված կապուղիներ:

3.4. Եթե համակարգի Մասնակիցը պաշտոնական գրությամբ հայտնում է իր անհամաձայնությունը Համակարգի Կանոնների փոփոխության նախագծի դրույթների կամ դրա մի մասի վերաբերյալ, ապա դա հիմք է հանդիսանում նախագիծը ուժի մեջ մտնելուց հետո, տվյալ Մասնակցի մասնակցությունը համակարգում ժամանակավոր կասեցնելու համար՝ մինչև առկա տարաձայնությունների կամ անհամաձայնությունների լուծումը:

4. ԹԵԼՍԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4.1. Համակարգում դրամական փոխանցումները կատարվում են Հաճախորդների կողմից տրված վճարային հանձնարարականների հիման վրա: Դրամական միջոցների փոխանցման և ստացման համար փաստաթղթերի ձևանմուշները սահմանված է Համակարգի Կանոնների հավելված 5-ով և 6-ով:

4.2. Հաճախորդից վճարային հանձնարարականը ստանալուց անմիջապես հետո Համակարգի Մասնակիցը առցանց ռեժիմում համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Համակարգի Օպերատորին՝ Հաճախորդի վճարային հանձնարարականը ի կատարումն ընդունելու համար: Մասնակցի կողմից ուղարկված հաղորդագրությունը պարտադիր կարգով ներառում է"

- Փոխանցման ունիկալ համարը, որը նախատեսված է փոխանցումը նույնականացնելու համար,
- Փոխանցման արժույթը և չափը,
- Հաճախորդի մասին տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նրան նույնականացնել,
- Ստացողի մասին տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նրան նույնականացնել:

4.3. Համապատասխան վավերապայմաններով լրացված էլեկտրոնային հաղորդագրությունը ստանալուց հետո Համակարգի Օպերատորը առցանց ռեժիմում իրականացնում է հաղորդագրության մշակում: Հաղորդագրության մշակման փուլում ստուգվում է Մասնակցի տվյալ հաղորդագրությունը ուղարկելու իրավասությունները և համապատասխան դրամական միջոցների բավարարությունը տվյալ փոխանցումը կատարելու համար:

4.4. Կանոնների 4"2 և 4"3 կետով սահմանված պահանջներին չբավարարելու դեպքում Մասնակցի կողմից ուղարկված էլեկտրոնային հաղորդագրության կատարումը մերժվում է, ինչի մասին Մասնակիցը առցանց ռեժիմում տեղեկացվում է:

4.5. Համակարգի Օպերատորի կողմից փոխանցման մասին հաղորդագրության մշակման փուլը իրականացնելուց և դրական պատասխան տալուց հետո, փոխանցումը Համակարգում դառնում է հասանելի Շահառուին վճարելու համար:

4.6. Փոխանցումը Շահառուին վճարելու համար Ստացող-Մասնակիցը Շահառուից պահանջում է փոխանցման ունիկալ համարը և ստուգում է փոխանցման առկայությունը Համակարգում:

4.7. Փոխանցումը համակարգում առկա և վճարման պատրաստ լինելու դեպքում Ստացող-Մասնակիցը իրականացնում է Շահառուի նույնականացում Ստացող-Մասնակցի օրենսդրության պահանջներին համապատասխան: Շահառուին նույնականացնելիս թույլատրվում է անվան, ազգանվան տարբերություններ, եթե նշված է ծննդյան ամսաթիվը, հաշվի առնելով թարգմանությունների համար կիրառվող ընդհանուր սկզբունքները:

4.8. Շահառուին նույնականացնելուց հետո Ստացող-Մասնակիցը կատարում է փոխանցման վճարում այն արժույթով, որով որ կատարվել է տվյալ փոխանցումը, եթե Համակարգի Օպերատորի և Մասնակցի միջև այլ գրավոր պայմանավորվածություն չկա:

4.9. Սույն գլխով սահմանված հաղորդագրությունների փոխանցումը իրականացվում է Համակարգի աշխատանքը ապահովող ծրագրային ապահովման միջոցով՝ առցանց ռեժիմով: Համակարգում Հաճախորդների կողմից կատարված փոխանցումները Շահառուների ստանալու համար հասանելի են դառնում փոխանցման պահից առավելագույնը քսան րոպեի ընթացքում, եթե կոնկրետ փոխանցման կամ փոխանցման ուղղության մասով այլ ժամկետներ սահմանված չեն:

4.10. Հաճախորդներից կարգադրությունները ընդունելիս Մասնակիցները գործում են իրենց անունից և սեփական առևտրային նպատակներով, ինքնուրույն են կրում պատասխանատվություն Հաճախորդների առջև պարտավորությունները կատարելու համար: Համակարգի Օպերատորը կամ այլ Մասնակիցը կարող է ենթարկվել պատասխանատվության Հաճախորդի առջև պարտավորությունների չկատարման համար միայն սեփական մեղքի առկայության դեպքում:

4.11. Մասնակիցները ինքնուրույն են պատասխանատվություն կրում կիրառելի օրենսդրության, այդ թվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, կանխիկ և անկանխիկ հաշվարկների, անձնական տվյալների պաշտպանության, արժութային օրենսդրության և այլ պարտադիր պահանջների պահպանման համար:

4.12. Գործառնական (աշխատանքային) ժամերը, որի ընթացքում Մասնակիցները սպասարկում են Հաճախորդներին և Ստացողներին, սահմանվում է նրանց կողմից ինքնուրույն:

4.13. Մասնակիցների ցանկը տեղադրվում է Համակարգի պաշտոնական կայքում: Մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են Համակարգի Մասնակիցների ցուցակում:

4.14. Մասնակիցները իրականացնում են «ԹԵԼՍԵԼ» Համակարգի շրջանակներում ծառայությունների առաջխաղացմանն ուղղված միջոցառումներ:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

5.1. Համակարգի կառուցվածքը.

- Համակարգի Օպերատոր,
- Համակարգի Հաշվարկային Կենտրոն,
- Համակարգի Մասնակիցներ:

5.2. Գործառույթների բաշխումը.

5.2.1. «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ն, հանդիսանալով Համակարգի Օպերատոր, իրականացնում է Գործառնական կենտրոնի, Քլիրինգային կենտրոնի և Հավաստագրման կենտրոնների գործառույթները:

Գործառնական կենտրոնի գործառույթներն են՝ Համակարգի Մասնակիցներին՝ ԹԵԼՍԵԼ ծառայությունների հասանելիության ապահովում, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակում:

Քլիրինգային կենտրոնի գործառույթներն են՝ վճարահաշվարկային փաստաթղթերի հավաքագրումը, խմբավորումը, փոխանակումը, ինչպես նաև վերջնահաշվարկի համար Համակարգի Մասնակիցների դիրքերի հաշվարկումը և կատարված հաշվարկների հիման վրա համապատասխան տեղեկությունների տրամադրումը Հաշվարկային Կենտրոնին.

Հավաստագրման կենտրոնի գործառույթներն են՝ էլեկտրոնային ստորագրության (ԷՍ), ստուգման բանալիների գրանցման և հավաստագրման իրականացում:

5.2.2. Հաշվարկային Կենտրոնի գործառույթները իրականացվում են Համակարգի Օպերատորի հետ համապատասխան պայմանագիր կնքած բանկի կողմից:

Հաշվարկային Կենտրոնի գործառույթներն են՝ Համակարգի Օպերատորի կողմից ստացված քլիրինգային տեղեկությունների հիման վրա վերջնահաշվարկի իրականացում՝ Համակարգի Մասնակիցների հաշիվներից դրամական միջոցների ելքագրում և/կամ մուտքագրում:

5.2.3. Համակարգի Մասնակիցները իրականացնում են ԹԵԼՍԵԼ ծառայությունների մատուցում իրենց սպասարկման կետերի և ՀԲՍ-ների միջոցով:

5.2.4. Համակարգի Օպերատորը նաև կարող է հանդես գալ որպես Համակարգի Մասնակից, այսինքն մատուցել ԹԵԼՍԵԼ ծառայություններ:

5.2.5. «ԹԵԼՍԵԼ» համակարգը կարող է նաև համագործակցել այլ տեղական կամ արտասահմանյան համակարգերի հետ: Այլ համակարգերի հետ համագործակցության պայմանները և առանձնահատկությունները սահմանվում են տվյալ համակարգերի հետ կնքվող համապատասխան պայմանագրերով:

5.2.6. Այլ համակարգերի հետ համագործակցությունը կազմակերպվում է ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի թիվ 295-Ն որոշումով (առ 08.06.2005թ") հաստատված «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ով և թիվ 250-Ն որոշումով (առ 23.09.2014թ.) հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ով սահմանված կարգով:

6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Համակարգի Օպերատորն իրավունք ունի՝

6.1.1. Մերժել նոր մասնակցի Համակարգին միացումը՝ մասնակցության չափանիշ(ներ)ից, այդ թվում ՀՀ իրավական ակտերի պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու, Համակարգին սպառնացող ռիսկերի առկայության դեպքում:

6.1.2. Ձեռնարկել Մասնակիցների վրա ներգործության միջոցներ նրանց կողմից Համակարգի կանոնների, պայմանագրի պայմանների խախտումների հայտնաբերման դեպքում՝ ներառյալ Մասնակցի կողմից Գործառնությունների կատարման ժամանակավոր կասեցումը կամ Համակարգին մասնակցության դադարեցումը:

6.1.3. Ընդլայնել ԹԵԼՍԵԼ Ծառայությունների ցանկը:

6.1.4. Կազմակերպել ԹԵԼՍԵԼ ծառայությունների առաջխաղացման միջոցառումներ:

6.2. Համակարգի Օպերատորը պարտավոր է՝

6.2.1. Սահմանել Համակարգի Կանոնները, կազմակերպել և իրականացնել վերահսկողություն Մասնակիցների և Հաշվարկային Կենտրոնի կողմից դրանց պահպանման նկատմամբ:

6.2.2. Պահանջներ սահմանել Հաշվարկային Կենտրոնի նկատմամբ, այդ թվում նրա ֆինանսական վիճակի և տեխնոլոգիական ապահովման մասով:

6.2.3. Կազմակերպել ռիսկերի կառավարման համակարգը, իրականացնել Համակարգում ռիսկերի գնահատումը և կառավարումը:

6.2.4. Ապահովել Համակարգի հաճախորդների դիմումների ընդունումը:

6.2.5. Ապահովել Մասնակիցների՝ Համակարգի աշխատանքի հարցերով դիմումների ընդունումը և մշակումը:

6.2.6. Հնարավորության սահմաններում -ապահովել Մասնակիցների հետ վեճերի մինչդատական և/կամ միջնորդ քննության հնարավորությունը:

6.2.7. Երաշխավորել իր կողմից բանկային գաղտնիքի պահպանումը:

6.2.8. Ապահովել տեղեկատվության պաշտպանությունը դրամական միջոցների փոխանցումներ իրականացնելիս, այդ թվում ՀՀ ԿԲ-ի և միջազգային ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան:

7. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Մասնակիցն իրավունք ունի՝

7.1.1. Ինքնուրույն սահմանել հաճախորդների սպասարկման կետերի տեղակայությունը և քանակը:

7.1.2. Նախապես Համակարգի Օպերատորին տեղեկացնելով ժամանակավորապես կասեցնել ԹԵԼՍԵԼ ծառայությունների մատուցումը (լրիվ կամ մասնակի):

7.2. Մասնակիցը պարտավոր է՝

7.2.1. Ինքնուրույն ապահովել Համակարգին իր մասնակցության տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունը՝ Համակարգի Կանոնների պահանջներին համապատասխան:

7.2.2. Համակարգի Օպերատորին տրամադրել փաստաթղթեր՝ Համակարգի Կանոններին համապատասխան:

7.2.3. Ժամանակին և լրիվ ծավալով կատարել սեփական դրամական պարտավորությունները Համակարգի Օպերատորի, Ուղարկողի և Ստացողի առջև Գործառնությունները իրականացնելիս:

7.2.4. Երաշխավորել բանկային գաղտնիքի պահպանումը:

7.2.5. Ապահովել տեղեկատվության պաշտպանությունը դրամական միջոցների փոխանցումներ իրականացնելիս, այդ թվում ՀՀ ԿԲ և միջազգային ստանդարտներով սահմանած պահանջներին համապատասխան:

7.2.6. Ապահովել տեղեկատվական անվտանգության և անձնական տվյալների ապահովման միջոցների ու մեթոդների պաշտպանությունը, որը ենթակա է պարտադիր պաշտպանության ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

7.2.7. Համակարգի Օպերատորի գրավոր հարցմամբ ուղարկել Համակարգում ֆիզիկական անձանց կողմից գործառնությունների կատարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները կամ հաստատված պատճենները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կատարված գործարքի մասին այլ տեղեկություններ:

8. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Հաշվարկային Կենտրոնը իրավունք ունի՝

8.1.1. Պահանջել Համակարգի Օպերատորից և Մասնակիցներից իր մոտ առկա հաշիվներում ապահովել բավարար դրամական միջոցներ՝ Համակարգի կանոններով սահմանված պարտավորությունները կատարելու համար:

8.1.2. Ըստ անհրաժեշտության Համակարգի Օպերատորի հետ իրականացնել վերջնահաշվարկների ստուգում:

8.2. Հաշվարկային Կենտրոնը պարտավոր է՝

8.2.1. Ինքնուրույն ապահովել Համակարգում իր աշխատանքի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունը՝ Համակարգի Կանոնների պահանջներին համապատասխան:

8.2.2. Համակարգի Օպերատորին տրամադրել փաստաթղթեր՝ Համակարգի Կանոններին համապատասխան:

8.2.3. Ժամանակին և լրիվ ծավալով կատարել դրամական միջոցների փոխանցումները Համակարգի Մասնակիցների և Համակարգի Օպերատորի միջև:

8.2.4. Երաշխավորել բանկային գաղտնիքի պահպանումը:

8.2.5. Ապահովել տեղեկատվության պաշտպանությունը դրամական միջոցների փոխանցումներ իրականացնելիս, այդ թվում ՀՀ ԿԲ-ի և միջազգային ստանդարտներով սահմանած պահանջներին համապատասխան:

8.2.6. Ապահովել տեղեկատվական անվտանգության և անձնական տվյալների ապահովման միջոցների ու մեթոդների պաշտպանությունը, որը ենթակա է պարտադիր պաշտպանության ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

8.2.7. Համակարգի Օպերատորի գրավոր հարցմամբ ուղարկել Համակարգում ֆիզիկական անձանց կողմից գործառնությունների կատարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները կամ հաստատված պատճենները:

9. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

9.1. Համակարգին մասնակցության պայմանագրի կնքման համար մասնակցության թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

9.1.1. Ընդհանուր ֆինանսական կայունություն,

9.1.2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցների իրականացում,

9.1.3. Գործառնությունների կատարման պահին կիրառվող Համակարգի տեխնիկական պահանջներին համապատասխան աշխատելու հնարավորության ապահովում,

9.1.4. Դրամական միջոցների փոխանցման գործունեության իրականացման անհրաժեշտ լիցենզիաների (թույլտվությունների) առկայությունը՝ Մասնակցի գտնվելու երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան,

9.1.5. Սեփական կորպորատիվ ցանցում տեղեկատվության պաշտպանության ապահովումը, այդ թվում Համակարգում աշխատելիս,

9.1.6. Միացման տեխնիկա-սարքավորումային պատրաստվածություն,

9.1.7. Բանկային և առևտրային գաղտնիքի ապահովումը:

9.2. Համակարգին մասնակցությունը սկսվում է Համակարգի Օպերատորի հետ մասնակցության պայմանագիր կնքելուց և սպասարկման կետերը Համակարգում գրանցելուց հետո:

10. ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼԸ

10.1. Մասնակցի՝ Համակարգին միացումը իրականացվում է Համակարգի Օպերատորի հետ «ԹԵԼՍԵԼ» համակարգին մասնակցության պայմանագրի կնքման միջոցով:

10.2. Մասնակիցները միանում են Համակարգի Կանոններին՝ Համակարգի Օպերատորի հետ համակարգին մասնակցության պայմանագիրը կնքելիս դրանք ամբողջությամբ ընդունելու միջոցով:

10.3. Համակարգին միանալն անվճար է:

11. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

11.1. «ԹԵԼՍԵԼ» Համակարգի մասնակցի գրանցումը.

11.1.1. Մասնակիցը և նրա ստորաբաժանումները, որոնք պետք է մատուցեն ԹԵԼՍԵԼ ծառայություններ, գրանցվում են Համակարգի Օպերատորի կողմից:

11.1.2. Գրանցումը կատարվում է Համակարգի Օպերատորի կողմից Մասնակցին և/կամ նրա ստորաբաժանումներին՝ Հայտի հիման վրա (հայտը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով), այդ թվում համապատասխան տեխնիկական հնարավորության առկայության դեպքում Համակարգի Օպերատորի ծրագրային միջոցների օգտագործմամբ, չորս և ավելի տառից բաղկացած՝ ABCD (լատինական տառեր) Համակարգի Մասնակցի անհատական ծածկագրի շնորհման միջոցով:

11.1.3. Հայտը ձևակերպվում է Մասնակցի կողմից հայտերի լրացման կարգին համապատասխան:

12. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

12.1. Մասնակցի միացման ընդհանուր պայմանները.

12.1.1. «ԹԵԼՍԵԼ» Համակարգին միացման համար Մասնակցի կողմից պետք է պահպանվեն հետևյալ պայմանները՝

1) գրավոր համաձայնեցվեն տեղեկատվության փոխանակման կապուղիները,
2) Մասնակիցը գրանցված լինի «ԹԵԼՍԵԼ» Համակարգում,
3) կատարվեն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության տեխնիկական և տեխնոլոգիական պայմանները,
4) կատարվեն թեստային գործառնությունները,
5) գրավոր կերպով Համակարգի Օպերատորին ներկայացվեն բանկային վավերապայմաններ՝ Համակարգում վերջնահաշվարկը իրականացնելու համար,
6) Համակարգի Օպերատորին ուղարկված լինի Համակարգում աշխատանքը սկսելու պատրաստ լինելու մասին Հայտը (հայտը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով):

12.2. Մասնակցի սպասարկման նոր կետերի միացումը տեղի է ունենում Մասնակցի կողմից ներկայացված համապատասխան հայտի հիման վրա՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

13.1. Համակարգում մասնակցության ժամանակավոր կասեցումը կամ դադարեցումը կարող է կատարվել Մասնակցի նախաձեռնությամբ՝ համապատասխան հայտի հիման վրա:

13.2. Մասնակցի կողմից համակարգում ժամանակավոր կասեցման կամ դադարեցման հայտը գրավոր կամ էլեկտրոնային պետք է ներկայացվի կասեցման կամ դադարեցման կանխատեսվող ժամկետից առնվազն 10 (տաս) աշխատանքային օր առաջ: Մասնակցի աշխատանքը համակարգում դադարեցվում է հայտում նշված աշխատանքային օրվա վերջում:

13.3. Համակարգի Օպերատորի նախաձեռնությամբ Մասնակցի մասնակցությունը համակարգում կարող է դադարեցվել՝ Մասնակցի կողմից Համակարգի ,Կանոնները, պայմանագրի պայմանները խախտելու, իր գործունեության վերաբերյալ կամ Համակարգի Օպերատորի հարցմամբ այլ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու, Մասնակցի հետագա մասնակցությունը Համակարգին Համակարգի օպերատորի կողմից ռիսկային համարվելու կամ Համակարգին մասնակցության չափանիշներին չբավարարելու դեպքում:

13.4. Համակարգի օպերատորը 13.3 կետով նշված դեպքերում կարող է դադարեցնել մասնակցի մասնակցությունը Համակարգին առանց նախնական ծանուցման, սակայն դադարեցնելուց հետո պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Մասնակցի դադարեցման մասին՝ նշելով դադարեցման պատճառները:

13.5. Սույն մասով սահմանված հայտերը և ծանուցումները Համակարգի Մասնակիցները միմյանց են ներկայացնում համաձայնեցված կապուղիներով:

14. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

14.1. Դրամական միջոցների փոխանցման ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճար.

14.1.1. Հաճախորդից գանձվող Միջնորդավճարի չափը սահմանվում է Համակարգի Օպերատորի կողմից և արձանագրվում Համակարգի սակագներում: Համակարգի

սակագների, ինչպես նաև առանձնահատկությունների և գոյություն ունեցող սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվում է Համակարգի Օպերատորի պաշտոնական կայքում:

14.1.2. Միջնորդավճարների տատանման դեպքում, դրանց չափերը (չափերը որոշելու չափանիշները, պայմանները) ի գիտություն է փոխանցվում Համակարգի Մասնակիցներին՝ Հաճախորդների սպասարկման վայրերում, ինքնասպասարկման տերմինալների վահանակների վրա և ՀԲՍ համակարգերում զետեղելու նպատակով:

14.2. Հաճախորդներից միջնորդավճարների գանձման ընդհանուր սկզբունքներն են.

14.2.1. Միջնորդավճարը հաշվարկվում և գանձվում է ամբողջ ծավալով Հաճախորդին սպասարկող Մասնակցի կողմից: Հայաստանի Հանրապետության տարածքում միջնորդավճարը գանձվում է ՀՀ դրամով:

14.2.2. Միջնորդավճարը գանձվում է դրամական միջոցների փոխանցման գումարից զատ:

14.2.3. Միջնորդավճարի չափը կարող է տատանվել կախված՝

1) փոխանցման գումարից,
2) ուղարկողի կողմից փոխանցման իրականացման համար օգտագործվող միջոցներից, այդ թվում վճարման էլեկտրոնային միջոցներից և անկանխիկ հաշվարկների ձևերից,
3) ուղարկողի կողմից փոխանցման վայրի ընտրությունից,
4) փոխանցմանը լրացուցիչ ուղեկցող ծառայությունների առկայությունից կամ բացակայությունից:

14.2.4. Համակարգի սակագները ընդունվում են որպես ԹԵԼՍԵԼ ծառայություններ մատուցող յուրաքանչյուր Մասնակցի՝ Հաճախորդների սպասարկման սակագներ:

14.2.5. Հաճախորդներին սպասարկելիս Մասնակից-Ուղարկողի կողմից ՀԲՍ տարբեր միջոցների, բանկային հաշիվների օգտագործման դեպքում թույլատրվում է Հաճախորդների համար Մասնակից-Ուղարկողի կողմից հատուկ միջնորդավճարների սահմանում՝ նախապես Համակարգի Օպերատորի հետ դրանց չափը համաձայնեցնելու պայմանով:

14.2.6. Համակարգի Սակագների, ինչպես նաև 14.2.5 կետի համաձայն Մասնակցի կողմից ինքնուրույն սահմանված միջնորդավճարների մասին տեղեկատվությունը հասցվում է Հաճախորդներին Համակարգի Մասնակցի կողմից ինքնուրույն:

14.2.7. Համակարգի շրջանակներում փոխանցումների ընդունման, վճարման, փոխանցման, վերջնահաշվարկի և միջնորդավճարների հաշվարկման արժույթները չեն կարող տարբերվել և պետք է լինեն միևնույնը կոնկրետ փոխանցման համար:

14.3. Մասնակիցների պարգևատրման չափը և կարգը.

14.3.1. Համակարգի Մասնակիցների պարգևատրման չափը սահմանվում է Համակարգի Օպերատորի կողմից՝ Համակարգի սակագներով կամ Մասնակցի հետ կնքվող պայմանագրով:

14.3.2. Համակարգի Օպերատորի և Համակարգի Մասնակիցների Պարգևավճարները ձևավորվում են Հաճախորդներից գանձված միջնորդավճարներից:

14.3.3. Պարգևավճարների վճարումը կատարվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ Համակարգում կատարվող վերջնահաշվարկի ժամանակ, եթե Համակարգի Օպերատորի և կոնկրետ Մասնակցի միջև կնքված պայմանագրով պարգևավճարումների վճարման այլ կարգ նախատեսված չէ:

14.4. Մասնակիցների պարգևատրումների սահմանման ընդհանուր սկզբունքները.

14.4.1. Պարգևատրման գումարը կարող է արտահայտված լինել.

1) Տոկոսային հարաբերությամբ փոխանցման գումարի նկատմամբ,
2) տոկոսային հարաբերությամբ փոխանցման գումարի նկատմամբ՝ գումարած ֆիքսված գումար,
3) ֆիքսված գումար,
4) տոկոսային հարաբերությամբ հաճախորդից գանձվող միջնորդավճարի նկատմամբ,
5) տոկոսային հարաբերությամբ փոխանցման գումարի նկատմամբ, սակայն ոչ ավել քան հաճախորդիցից գանձվող միջնորդավճարի գումարի որոշակի մասը,
6) տոկոսային հարաբերությամբ որոշակի ուղղությամբ, փոխանցումների սեգմենտում Համակարգի Օպերատորի կողմից սահմանված միջնորդավճարի գումարի նկատմամբ

14.4.2. Պարգևատրման գումարի չափը կարող է տատանվել, այդ թվում կախված՝

1) փոխանցման աշխարհագրական ուղղությունից,
2) փոխանցման մասով Մասնակցի կողմից իրականացվող գործառնություններից,
3) Մասնակցի կողմից օգտագործվող փոխանցման իրականացման միջոցներից,
4) փոխանցման արժույթից,
5) փոխանցման արժույթի և վճարման արժույթի տարբերությունից,
6) Պարգևատրումը հաշվառվում է փոխանցման արժույթով, եթե Մասնակցի՝ Համակարգի Օպերատորի հետ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

14.5. Սակագների և պարգևավճարների փոփոխման կարգը.

14.5.1. Համակարգի Օպերատորն իրավունք ունի փոփոխություններ կատարել Համակարգի սակագներում, այդ թվում միակողմանի փոխել Հաճախորդներից գանձվող միջնորդավճարների չափը, վճարային ծառայությունների դիմաց Հաճախորդներին ու Ստացողներին սպասարկելու համար Համակարգի Օպերատորի կողմից Մասնակիցներին վճարվող պարգևատրման չափը:

14.5.2. Գործողության սահմանափակ ժամկետով Համակարգի սակագների սահմանումը Համակարգի Օպերատորի կողմից չի հանդիսանում սակագների փոփոխության գործողություն: Այդպիսի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասցվում է Մասնակիցներին նախապես: Համակարգի Օպերատորը իրեն իրավունք է վերապահում երկարաձգել կամ սահմանափակել նշված սակագների գործողության ժամկետը անսահմանափակ քանակությամբ:

14.5.3. Համակարգի սակագների և Մասնակիցների միջնորդավճարների փոփոխությունները ուժի մեջ են մտնում Մասնակցին գրավոր կերպով կամ համաձայնեցված կապուղիներով ծանուցելուց հետո առաջիկա ամսվա առաջին աշխատանքային օրից, եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նախատեսված չէ, բայց ոչ շուտ քան ծանուցման 15-րդ օրը:

15. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

15.1. Համակարգով փոխանցվող գործարքները կատարվում են միայն հավաստագրման դեպքում: Գործարքների հավաստագրումն իրականացվում է Համակարգի Օպերատորի կողմից:

15.2. Գործարքների հավաստագրումն իրականացվում է Մասնակցի սահմանաչափի շրջանակներում, որը գերազանցելու դեպքում տվյալ Մասնակցի գործարքը մերժվում է:

15.3. Մասնակցի սահմանաչափը նրա զուտ դիրքի և տրամադրված Երաշխիքային գումարի հանրագումարն է:

15.4. Մասնակցի զուտ դիրքը հաշվարկվում է Համակարգի Կանոնների 16-րդ կետով սահմանված կարգով:

15.5. Համակարգի շրջանակներում փոխանցումները իրականացնելու և վերջնահաշվարկի անխափանությունը ապահովելու համար Մասնակիցները Համակարգի Օպերատորին կարող են տրամադրել Երաշխիքային գումար (Մասնակիցը իրավունք ունի երաշխիքային գումար չվճարել): Երաշխիքային գումարի չափը որոշում է Մասնակիցը՝ կախված տվյալ Մասնակցի կողմից կանխատեսվող գործարքների ծավալից և գումարից:

15.6. Մասնակցի կողմից Երաշխիքային գումարը վճարվում է Համակարգի Օպերատորի կողմից նշված՝ Հաշվարկային Կենտրոնում առկա Համակարգի համար բացված հաշվարկային հաշվին: Մասնակցի կողմից վճարված Երաշխիքային գումարը Համակարգի Օպերատորը իրավունք ունի օգտագործել միայն Համակարգում տվյալ Մասնակցի պարտավորությունների մասով վերջնահաշվարկ իրականացնելու համար:

15.7. Եթե Մասնակիցը Երաշխիքային գումար չի տրամադրել, ապա նա «ԹԵԼՍԵԼ» համակարգով կարող է կատարել դրամական փոխանցումներ միայն տվյալ պահի դրությամբ իր կողմից ստացողներին (շահառուներին) վճարված գումարների չափով:

15.8. Համակարգի շրջանակներում ժամանակի առցանց ռեժիմում յուրաքանչյուր գործարքից հետո կատարվում է Համակարգի Մասնակցի սահմանաչափի ճշգրտում՝ հիմք ընդունելով մինչ այդ կատարված գործարքները. այն է սահմանաչափի մնացորդը ճշգրտվում է զուտ դիրքով հաշվարկված պարտավորությունների հետ,

որտեղ ներառվում են բոլոր շարժերը՝ փոխանցումներ, ստացումներ, պարգևավճարներ:

16. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

16.1. Քլիրինգը Համակարգում իրականացվում է Մասնակիցներից կողմից ուղարկված և վճարված փոխանցումների հիման վրա:

16.2. Համակարգում Մասնակիցների նկատմամբ վճարային քլիրինգային դիրքը սահմանվում է նետտո-հիմքով:

16.3. Նետտո-հիմքով վճարային քլիրինգային դիրքը սահմանվում է Համակարգի Օպերատորի գործառնական օրվա (գործառնական օրվա տևողություն է ժամը 00:00:00-ից մինչև 23:59:59 երևանյան ժամանակով) ընթացքում Մասնակիցների կողմից ուղարկված փոխանցումների (հաշվի առած պարգևատրման գումարները) և Մասնակիցների կողմից վճարված փոխանցումների (հաշվի առած պարգևատրման գումարները), տարբերության չափով:

16.4. Նետտո-հիմքով վճարային քլիրինգային դիրքի սահմանումից հետո, քլիրինգային կենտրոնը Հաշվարկային Կենտրոնին է փոխանցում համապատասխան վճարային կարգադրություն՝ համաձայն նետտո հաշվարկի հետևյալ կերպ.

[S (Վճարված) + K (պարգևավճար վճարված) + Z (վերադարձված)+K (վերադարձի պարգևավճար)] - [S (ուղարկված) + K (պարգևավճար փոխանց.)], որտեղ

- S(ուղարկված)՝ դրամական միջոցներ, որոնք փոխանցվել են ԹԵԼՍԵԼ համակարգով;
- K(պարգևավճար փոխանց)՝ Փոխանցված դրամական միջոցներից գանձված փոխանցող մասնակցին հասանելիք պարգևավճար;
- S(Վճարված)՝ դրամական միջոցներ, որոնք վճարվել են «ԹԵԼՍԵԼ» համակարգով;
- K(պարգևավճար վճարված)՝ Վճարված դրամական միջոցների դիմաց վճարող մասնակցին հասանելիք պարգևավճար;
- Z(վերադարձ)՝ «ԹԵԼՍԵԼ» համակարգով վճարված և չեղարկված փոխանցումների վերադարձ.

- K(վերադարձի պարգևավճար)՝ Չեղարկված փոխանցումների վերադարձի դեպքում վերադարձվող պարգևավճար:

16.5. Յուրաքանչյուր աշխատանքային օր Համակարգում քլիրինգը իրականացնելուց հետո Համակարգի Օպերատորը էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուր Մասնակցին ուղարկում է տվյալ Մասնակցի քլիրինգային դիրքի մասին հաշվետվություն, որում նաև արտացոլվում է տվյալ մասնակցի Երաշխիքային գումարի մնացորդը (երաշխիքային գումարի առկայության դեպքում): Հաշվետվություն ձևաչափը համաձայնեցվում է տվյալ Մասնակցի հետ:

17. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

17.1. Համակարգում յուրաքանչյուր օր կատարված փոխանցումների համար Համակարգի Մասնակիցների հետ վերջնահաշվարկը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:

17.2. Վերջնահաշվարկը կատարվում է Համակարգի Օպերատորի կողմից Հաշվարկային Կենտրոնին սույն կանոնների 16-րդ կետով սահմանված կարգով գեներացված և քլիրինգային տվյալների հիման վրա ձևավորված վճարային կարգադրության հիման վրա:

17.3. Համակարգի Օպերատորը Հաշվարկային Կենտրոնին վճարային կարգադրությունը փոխանցում է յուրքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 11:00, որը ստանալուց հետո Հաշվարկային Կենտրոնը նույն գործառնական օրվա մինչև 14:00 Համակարգի մասնակիցների հետ կատարում է վերջնահաշվարկ:

17.4. Վերջնահաշվարկը իրենից ներկայացնում է Համակարգի հաշվարկային հաշիվներից դրամական միջոցների ելքագրում և փոխանցում քլիրինգի արդյունքում դրական դիրք ունեցող Մասնակիցներին, տվյալ Մասնակիցների կողմից ներկայացված և իրենց պատկանող բանկային հաշիվներին: Քլիրինգի արդյունքում բացասական դիրք ունեցող Մասնակիցների գծով Համակարգի Օպերատորի կողմից Համակարգում կատարվում է Երաշխիքային գումարների վերահաշվարկ/ճշգրտում:

17.5. Համակարգում վերջնահաշվարկների իրականացման նպատակով Մասնակիցները բանկային հաշիվներ կարող են բացել Հաշվարկային Կենտրոնում, ինչպես նաև ՀՀ

Կենրոնական Բանկում, ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գրանցված այլ բանկերում կամ օգտագործել նախկինում այնտեղ բացված հաշիվը/հաշիվները:

17.6. Համակարգում վերջնահաշվարկը իրականացվում է այն արժույթով, որով որ կատարվել են դրամային փոխանցումները:

17.7. Յուրքանչյուր աշխատանքային օր քլիրինգը կատարելուց հետո Համակարգի Օպերատորի կողմից Համակարգում կատարվում է բոլոր Մասնակիցների գծով հաշվառվող Երաշխիքային գումարների վերահաշվարկ և հաջորդ գործառնական օրվա համար հասանելի սահմանաչափերի ճշգրտում:

17.8. Մասնակիցը ինքնուրույն է հետևում իր Երաշխիքային գումարի մնացորդին և ինքնուրույն է որոշում դրա համալրման չափը և պարբերականությունը:

18. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1. Մասնակից-Ուղարկողի կողմից Գործառնության կատարումից հետո դրանում փոփոխությունների կատարման կարգը սահմանվում և հասցվում է ի գիտություն Հաճախորդին Մասանկից-Ուղարկողի կողմից ինքնուրույն:

18.2. Կանխիկ դրամական միջոցներով վճարման համար ֆիզիկական անձի օգտին ուղղված փոխանցման վերադարձը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե հարցման կամ դրա Գործառնական կենտրոն փոխանցման պահին դրամական միջոցները դեռևս չեն վճարվել Ստացողին, այսինքն մինչև դրա վերջնական լինելը՝ ընդ որում գանձված վիջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:

18.3. Եթե փոխանցումը հնարավոր չի եղել կատարել Համակարգի Օպերատորի մեղքով կամ Համակարգում առաջացած խնդիրների պատճառներով, ապա Հաճախորդին փոխանցման գումարից զատ վերադարձվում է նաև նրա կողմից վճարված միջնորդավճարը ամբողջությամբ:

18.4. Համակարգի միջոցով վերադարձի գործառնության իրականացման պայման է հանդիսանում Ուղարկողի կողմից ուղարկման փաստը հաստատող փաստաթղթի ներկայացումը կամ անհրաժեշտության դեպքում՝ այն փաստաթղթերի, որոնք հաստատում են, որ ինքն է հանդիսանում Ուղարկողը:

18.5. Մասնակից-Ուղարկողի՝ Գործառնության կատարման հաստատում հանդիսացող փաստաթղթերը կորցրած Հաճախորդների հետ խնդիրների լուծման կարգը սահմանվում և Ուղարկող-հաճախորդներին ի գիտություն է հասցվում Մասնակից-Ուղարկողի կողմից ինքնուրույն:

18.6. Դրամական միջոցների վերադարձման Հաճախորդի դիմումը ընդունած Մասնակից-Ուղարկողը պարտավոր է անհապաղ, դրա ընդունման պահից, ուղարկել փոփոխության հարցումը Համակարգի Օպերատորին: Համապատասխան փոփոխությունների անհնարինության դեպքում, Համակարգի Օպերատորը ապահովում է այդպիսի հարցման՝ ծրագրային եղանակով փոխանցման անհնարինությունը:

18.7. Մասնակից-Ուղարկողը ծանուցում է Հաճախորդին հարցման մշակման արդյունքների մասին:

18.8. Հաճախորդի կողմից Համակարգով կատարված փոխանցումը Ստացողի համար «ԹԵԼՍԵԼ» Համակարգում ակտիվ է 12 (տասներկու) ամիս ժամկետով:

18.9. Եթե Ստացողը 18.8 կետում նշված ժամկետում չի ստանում իր գումարը՝ Համակարգի Օպերատորը Համապատասխան Ուղարկող-Մասնակցի հետ ձեռնարկում է միջոցներ տվյալ գումարը Հաճախորդին վերադարձնելու համար:

18.10. Եթե հնարավոր չի լինում գումարը վերադարձնել Հաճախորդին, ապա տվյալ գումարը Համակարգի Օպերատորի կողմից ճանաչվում է հասույթ և դեբետագրվում է իր հաշվին:

19. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԲՈՂՈՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

19.1. Համակարգի Հաճախորդների բողոքներին արձագանքելու միջոցառումները իրականացվում են համաձայն ՀՀ օրենքներով, , այլ իրավական ակտերով և Համակարգի Օպերատորի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

19.2. Հաճախորդների դիմումները ընդունվում են «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի տարածքում կամ էլեկտրոնային եղանակով Ընկերության info@tel-cell.am էլեկտրոնային հասցեի միջոցով:

19.3. Դիմումի պատասխանը փոստային կապի միջոցով ուղարկվում կամ առձեռն տրվում է հաճախորդին՝ տրամադրելով պատճենը՝ իրավախորհրդատուին:

19.4. Դիմում-բողոքները քննարկվում են և պատասխանները Հաճախորդներին ուղարկվում են դիմումները մուտք լինելու օրվանից 10-օրյա (տասնօրյա) ժամկետում: Դիմում-բողոքին ընթացք տալու համար ստուգում կատարելու, լրացուցիչ նյութեր պահանջելու կամ այլ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում Համակարգի Օպերատորը կարող է երկարաձգել դիմում-բողոքի քննարկման ժամկետը, բայց ոչ ավել, քան սահմանված ժամկետից 10 (տաս) օրով՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով դիմումատուին:

19.5. Դիմում-բողոքում առաջադրված հարցադրումները ընկերության իրավասությունից դուրս լինելու դեպքում ոչ ուշ, քան 5-օրյա (հնգօրյա) ժամկետում այդ մասին ծանուցում է ուղարկվում դիմումատուին:

19.6. Դիմումները ներկայացվում են Ընկերության տնօրենի անունով, անվանական, պարտադիր ստորագրվում են՝ նշելով դիմումատուի հետ հետադարձ կապի տվյալները (հաճախորդի անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար, կապի այլ միջոցներ),

19.7. Անանուն կամ կեղծ տվյալներով դիմումները համարվում են անվավեր և համապատասխան մակագրությամբ պահպանվում են ընդհանուր բաժնում:

19.8. Նշված դրույթների խախտման համար մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրության եւ Ընկերության ներքինընթացակարգերին փաստաթղթերին համապատասխան:

20.ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

20.1. Համակարգի Օպերատորն ապահովում է Համակարգի հուսալիությունը: Համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման գործառույթները բաշխվում են Համակարգի Օպերատորի և Մասնակիցների միջև: Ռիսկերի կառավարման

համակարգը ենթադրում է Համակարգի անխափան գործման համար անբարենպաստ հետևանքների առաջացման հավանականության նվազեցման միջոցառումներ, համալիր քայլեր և եղանակներ:

20.2. Համակարգի ռիսկերի կառավարման գործունեության կազմակերպման համար Համակարգի Օպերատորը մշակում և հաստատում է Համակարգի ռիսկերի կառավարման ոլորտի ներքին փաստաթղթեր, որոնք մանրամասնում են ռիսկերի կառավարման սկզբունքները, ինչպես նաև բովանդակում են ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառումներ և եղանակներ:

20.3. Ներքին փաստաթղթերը մշակվում են Համակարգի Օպերատորի կողմից՝ ՀՀ Կենտրոնական Բանկի գործող նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան և սահմանում են ԹԵԼՍԵԼ համակարգում ռիսկերի կառավարման համակարգը՝ ներառելով ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպումը, Մասնակիցների կողմից ռիսկերի կառավարման պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովող անձանց/ստորաբաժանումների գործառույթային պարտականությունների բաշխումը, տեղեկատվության փոխանակման և համագործակցության կարգը, որն անհրաժեշտ է ռիսկերի կառավարման համար: Տվյալ փաստաթղթերը կարող են որպես ի գիտություն տրվել Համակարգի Օպերատորի կողմից Մասնակիցներին առանձին:

20.4. Մասնակիցներն ինքնուրույն են իրականացնում ռիսկերի կառավարումը, որոնք բնորոշ են նրանց գործունեության տեսակին և պատասխանատվություն են կրում նշված ռիսկերի իրացման հետևանքների համար:

20.5. Թույլատրվում է.

20.5.1. Համակարգի ռիսկերի կառավարման կոլեգիալ մարմնի ստեղծումը, որի կազմում ներառվում են ռիսկերի կառավարման համար պատասխանատու Համակարգի Օպերատորի և Մասնակիցների ներկայացուցիչները:

20.5.2. Ռիսկերի կառավարման մարմնի գործառույթային պարտականությունների և իրավասությունների մեջ ներառվում է.

1) ռիսկերի կառավարման համակարգի արդիականացումը,
2) ռիսկերի կառավարման համակարգի պահանջների կատարողականի վերահսկողություն:

20.6. Համակարգի անխափանության ապահովումը.

20.6.1. Համակարգի Օպերատորը «ԹԵԼՍԵԼ» համակարգի անխափանության (այսուհետ նաև՝ ՀԱ) ապահովման գծով իրականացնում է Մասնակիցների գործունեության համակարգում:

20.6.2. Համակարգի Օպերատորը ՀԱ ապահովման գծով Համակարգի Մասնակիցների գործունեությունը համակարգում է նույն Կանոնների պահանջների և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով՝ ներառյալ համաձայնեցված կապուղիների սահմանումը, ինչպես նաև գործառնությունների մոնիթորինգի իրականացումը, Համակարգի համապատասխան մասնակիցների գործունեությանը վերաբերվող արդյունքների վերահսկումը:

20.6.3. Համակարգի Օպերատորը վերահսկողություն է իրականացնում Համակարգի մասնակիցների կողմից ՀԱ ապահովման և Համակարգի Կանոնների պահպանման նկատմամբ՝ մասնագիտացված արտագնա ստուգումների միջոցով և/կամ վերոնշյալ հսկողության իրականացման համար Համակարգի Մասնակիցներից ստացված անհրաժեշտ տեղեկատվության միջոցով:

20.6.4. ՀԱ ապահովման համար Համակարգի Օպերատորն իրականացնում է՝

1) Դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և պահպանում համակարգում,
2) Մասնակիցների վճարային դիրքերի և վերջնահաշվարկների մասին տեղեկատվության հաշվառումն ապահովող գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի շահագործման խափանումները թույլ չտալուն ուղղված միջոցներ, իսկ նշված խափանումների առաջացման դեպքում՝ իրականացնում է դրանց վերացմանն ուղղված միջոցներ,
3) գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի խափանումների պատճառների վերլուծություն, դրանց վերացմանն ուղղված միջոցների մշակում ու իրականացում,
4) խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղակատվական համակարգերի գործառույթային հնարավորությունների ապահովում (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակներով **դրանց**

թեստավորումը, իսկ նշված թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում,

5) սեփական ֆինանսական կայունության, այսինքն՝ իրացվելիության ապահովում, տնտեսական նորմատիվների պահպանում, ֆինանսական ցուցանիշների ապահովում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան, Հաշվարկային Կենտրոնում դրամական միջոցների բավարարության ապահովումը,

6) Մասնակիցների սահմանաչափերի հսկողություն՝ Մասնակիցների կողմից Համակարգի Օպերատորի հետ հաշվարկների իրականացման համար բավարար դրամական միջոցների ապահովման մասով:

20.6.5. Համակարգի Օպերատորն իրավունք ունի ձեռնարկել այլ միջոցներ՝ ուղղված Համակարգի անխափան աշխատանքի ապահովմանը:

20.6.6. ՀԱ ապահովման համար Հաշվարկային Կենտրոնը իրականացնում է.

1) Համակարգի Օպերատորի կողմից ստացված Մասնակիցների վճարային դիրքերի և հաշվարկների մասին տեղեկատվության պահպանումը և մշակումը ապահովող գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղակատվական համակարգերի շահագործման խափանումները թույլ չտալուն ուղղված միջոցներ, իսկ նշված խափանումների առաջացման դեպքում՝ իրականացնում է դրանց վերացմանն ուղղված գործողություններ,

2) գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի խափանումների պատճառների վերլուծություն, դրանց վերացմանն ուղված միջոցների մշակում ու իրականացում,

3) իրենց աշխատանքներում խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղակատվական համակարգերի գործառույթային հնարավորությունների պահպանման ապահովումը (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակներով դրանց թեստավորումը, իսկ նշված թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում,

4) իր հայեցողությամբ այլ միջոցներ:

20.6.7. ՀԱ ապահովման համար Մասնակիցներն իրականացնում են՝

1) իրենց աշխատանքներում խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղակատվական համակարգերի գործառույթային հնարավորությունների պահպանման ապահովումը (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակներով դրանց թեստավորումը, իսկ նշված թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում և տեղեկացում Համակարգի Օպերատորին,
2) Համակարգում կատարվող հաշվարկների կատարման համար օգտագործվող իրենց հաշիվներում Համակարգի Օպերատորի և Մասնակիցների հետ անխափան հաշվարկների իրականացման համար բավարար դրամական միջոցների (Երաշխիքային գումարի) պահպանմանն ուղղված գործողություններ, ինչպես նաև Համակարգով Ստացողներին ուղարկված փոխանցումների ժամանակին վճարման համար սեփական ստորաբաժանումների դրամարկղերում բավարար կանխիկ դրամական միջոցների ապահովմանն ուղղված միջոցներ,
3) իրենց հայեցողությամբ այլ միջոցներ:

21. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

21.1. Համակարգի Մասնակիցներից յուրաքանչյուրը ինքնուրույն է ապահովում փողերի լվացման և ահաբեկչություն ֆինանսավորման դեմ պայքարի միջոցները, դրանց կիրառումը և տեղեկացման ենթակա գործարքների մասով համապատասխան տեղեկությունների փոխանցումը լիազոր մարմին:

21.2. Համակարգի Մասնակից ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև Համակարգի Օպերատորը փողերի լվացման և ահաբեկչություն ֆինանսավորման դեմ պայքարի միջոցներ կիրառելիս ղեկավարվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը կարգավորող ՀՀ գործող օրենսդրության, ինչպես նաև այլ իրավական ակտերի պահանջներով:

21.3. Կասկածելի գործարքներ հայտնաբերելու դեպքում Համակարգի Օպերատորը իրավունք ունի տվյալ գործարքի մասով տեղեկություններ պահանջել այն

Մասնակցից, որի կողմից տվյալ գործարքը մուտքագրվել է Համակարգ, իսկ տվյալ Մասնակիցը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել պահանջված տեղեկությունները:

21.4. Կասկածելի գործարք հայտնաբերելու դեպքում Համակարգի Օպերատորը իրեն իրավունք է վերապահում մինչև 5 (հինգ) օրով սառեցնել տվյալ գործարքի կատարումը, մինչև բոլոր հանգամանքների պարզումը:

22. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

22.1. Սույն բաժնում սահմանվում են Համակարգի Մասնակիցների և Համակարգի Օպերատորի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության (այսուհետ՝ ԷՓՇ) կիրառմամբ տեղեկատվական համագործակցության ընդհանուր սկզբունքները, էլեկտրոնային փաստաթղթերի ձևակերպման ու բովանդակության, դրանց ձևաչափերի ու վավերապայմանների նկատմամբ ներկայացվող պահանջները, դրանց մշակման, կատարման և պահման առանձնահատկությունները:

22.2. ԷՓՇ ընդհանուր կանոնները.

22.2.1. ԹԵԼՍԵԼ ծառայությունների մատուցման ընթացքում տեղեկատվական համագործակցությունը իրականացվում է էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակման, ինչպես նաև ընդունող կողմի կողմից դրանց ստացման, հաստատման կամ պատասխանի միջոցով:

22.2.2. Համակարգով կիրառվող էլեկտրոնային փաստաթղթերը պահպանվում են առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով:

22.2.3. Համակարգում ԷՓՇ կազմակերպելու համար Մասնակիցների և Համակարգի Օպերատորի միջև ստեղծվում է VPN փակ ցանց, ինչպես նաև Համակարգի Օպերատորի կողմից գեներացվում և Մասնակցի կողմում տեղադրվում է հավաստագիր (сертификат): Հավաստագիրը տեղադրվում է սպասարկման կետի (մասնաճյուղի) վրա:

22.2.4. Համապատասխան հավաստագիրը տեղադրելուց հետո, յուրաքանչյուր սպասարկման կետի/մասնաճյուղի օգտատերերի գրանցումը, դրանց խմբագրումը կամ ապաակտիվացումը իրականացվում է Մասնակցի կողմից Համակարգի

Օպերատորի կողմից տրամադրված համապատասխան ադմինիստրատիվ ինտերֆեյսի միջոցով:

22.2.5. Համակարգի Օպերատորը հավաստագրերը Մասնակցին տրամադրում է միացման փուլում: Հավաստագրերը տրամադրվում են էլեկտրոնային կրիչով, փակ կնքված ծրարի մեջ տեղադրված:

22.2.6. Մասնակիցը պարտավոր է Համակարգի Օպերատորի կողմից ստացված հավաստագրերը պահպանի իր ներքին անվտանգության կանոններին համապատասխան և չտրամադրի դրանք երրորդ անձանց:

22.2.7. Լրացուցիչ հավաստագրերը տրամադրվում են Մասնակցի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

22.2.8. Համակարգում կիրառվող պաշտպանության միջոցները ապահովում են ԷՓՇ գաղտնիությունը, ամբողջականությունը և իսկությունը Կողմերի կողմից կապի համընդհանուր հասանելի ուղիների և չվարկաբեկված բանալիների օգտագործմամբ ԷՓՇ փոխանակություն իրականացնելիս:

22.2.9. Էլեկտրոնային փաստաթղթերը, հավաստագրերի օգտագործմամբ աշխատող Մասնակիցների աշխատակիցների կողմից ստորագրված թղթե կրիչներով համապատասխան փաստաթղթերի հետ, ունեն հավասար իրավաբանական ուժ, եթե պահպանվել են հետևյալ պայմանները.

1) Այդ էլեկտրոնային ստորագրությանը վերաբերող հավաստագրերը պատրաստված են Համակարգի Օպերատորի կողմից և չեն կորցրել իրենց ուժը (գործում են) ԷՓՇ ստորագրության իսկության ստուգման պահին կամ ԷՓՇ ստորագրման պահին,
2) հաստատվել է այդ էլեկտրոնային ստորագրության իսկությունը,
3) Հավաստագիրը օգտագործող աշխատակիցը լիազորված է Ուղարկող կողմի անունից ստորագրել թղթե կրիչներով հաշվարկային և այլ փաստաթղթեր:

22.3. ԷՓՇ կազմակերպման ընդհանուր դրույթները՝

22.3.1. Էլեկտրոնային հաղորդագրության ձևավորումը,

22.3.2. Էլեկտրոնային հաղորդագրության ուղարկումը և տեղ հասցնելը,

22.3.3. Էլեկտրոնային հաղորդագրության ստուգումը,

22.3.4. Էլեկտրոնային հաղորդագրության ստացման հաստատումը և դրա պատասխանը.

22.3.5. մուտքի և ելքի էլեկտրոնային փաստաթղթերի պահպանումը:

22.4. Էլեկտրոնային հաղորդագրության ձևավորումը իրականացվում է հետևյալ կարգով՝

22.4.1. Էլեկտրոնային հաղորդագրության ձևավորումը տվյալ էլեկտրոնային հաղորդագրության համար սահմանված ձևաչափով,

22.4.2. ձևավորված էլեկտրոնային հաղորդագրության ստորագրումը էլեկտրոնային ստորագրությամբ անհրաժեշտության դեպքում,

22.4.3. Էլեկտրոնային հաղորդագրության ուղարկումը:

22.5. Էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման, առաքման և ստացման առանձնահատկությունները կարող են սահմանվել Մասնակիցների հետ կնքվող լրացուցիչ պայմանագրերով:

22.6. Առաքված էլեկտրոնային փաստաթղթերի իսկության ստուգումը.

22.6.1. Էլեկտրոնային հաղորդագրության ստուգումը ներառում է՝

1) Էլեկտրոնային հաղորդագրության՝ դրա համար սահմանված ձևաչափին համապատասխանության ստուգում,

2) Էլեկտրոնային հաղորդագրության էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգում՝ դրա առկայության դեպքում:

22.6.2. Էլեկտրոնային հաղորդագրության ստուգման դրական արդյունքի դեպքում տվյալ էլեկտրոնային հաղորդագրությունը ճանաչվում է պատշաճ: Հակառակ դեպքում էլեկտրոնային հաղորդագրությունը համարվում է չստացված, ինչի մասին Ընդունող կողմը կարող է ուղարկել ծանուցում Ուղարկող կողմին:

23.ՏՏ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԷՓՇ ԺԱՄԱՆԱԿ

23.1. Տեղեկատվական անվտանգության ընդհանուր դրույթները.

23.1.1. Համակարգի Օպերատորն ապահովում է տեղեկատվական անվտանգությունը իր Հաճախորդների հետ տեղեկատվական փոխանակման դեպքում Համակարգի Կանոններին համապատասխան:

23.1.2. Մասնակիցներն իրենց տեղեկատվական համակարգի ներսում ինքնուրույն են ապահովում տեղեկատվական անվտանգությունն ԷՓՇ կազմակերպման ժամանակ:

23.2. Գործողություններ բանալիների վարկաբեկման դեպքում.

23.2.1. Բանալիների վարկաբեկման վերաբերյալ իրազեկման իրավունքների հաստատման համար, Համակարգի Օպերատորի կողմից յուրաքանչյուր Մասնակցին տրվում է իրազեկման գաղտնի ծածկագիր:

23.2.2. Կրիպտոգրաֆիկական բանալիների՝ վարկաբեկման դեպքում Հավաստագրի սեփականատերը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Համակարգի Օպերատորին իր բանալու վարկաբեկման մասին, նշելով վարկաբեկված բանալին և հայտնելով իրազեկման ծածկագիրը: Վարկաբեկման ամսաթիվ և ժամանակ է համարվում Համակարգի Օպերատորի կողմից «ԹԵԼՍԵԼ» Համակարգի Մասնակիցներից բանալու վարկաբեկման մասին համաձայնեցված կապուղով համապատասխան ձևավորված ծանուցման ստացման ամսաթիվը և ժամանակը: Ընդ որում եթե տվյալ ամսաթիվը կամ ժամը Համակարգի օպերատորի մոտ հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա ծանուցման պահ է հանդիսանում ստացմանը օրվան կամ ժամին հաջորդող աշխատանքային օրը կամ ժամը:

23.2.3. Վարկաբեկված բանալիների օգտագործմամբ Համակարգում բոլոր գործողությունները անմիջապես դադարեցվում են:

23.2.4. Էլեկտրոնային ստորագրության վարկաբեկված կրիպտոգրաֆիկ բանալիով ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը ճանաչվում է անվավեր:

23.2.5. Բանալու վարկաբեկման մասին Համակարգի Օպերատորին ծանուցելուց հետո Մասնակիցն իրականացնում է պահուստային բանալուն (առկայության դեպքում) անցնելուն գործողությունները կամ մշակում և հավաստման է ուղարկում նոր բանալի:

23.3. «ԹԵԼՍԵԼ» Համակարգում ԷՓԾ օգտագործման հետ կապված կոնֆլիկտային իրավիճակների լուծման կարգը.

23.3.1. ԷՓԾ օգտագործման, էլեկտրոնային ձևով հաշվարկների և ծածկագրման միջոցների ու էլեկտրոնային ստորագրության կիրառման հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:

23.3.2. Էլեկտրոնային փաստաթղթի տեքստի հեղինակի կամ իսկության վերաբերյալ կոնֆլիկտային իրավիճակի առաջացման դեպքում, որը հնարավոր չէ լուծել բանակցությունների միջոցով, Համակարգի Օպերատորի կողմից կազմակերպվում

է վիճելի էլեկտրոնային փաստաթղթի տեխնիկական փորձաքննության անցկացումը:

23.3.3. Կոնֆլիկտային իրավիճակի լուծումը կատավում է ցանկացած Մասնակցի նախաձեռնությամբ և ներառում է.

1) պահանջի ներկայացում,
2) փորձագիտական հանձնաժողովի կազմավորում,
3) կոնֆլիկտային իրավիճակի լուծում,
4) կոնֆլիկտային իրավիճակի եզրակացության և որոշման մշակում:

23.3.4. Կոնֆլիկտաին իրավիճակի լուծումը կայանում է կոնկրետ էլեկտրոնային փաստաթղթի իր բոլոր վավերապայմաններով էլեկտրոնային ստորագրության ստուգման բանալու հավաստագրի կոնկրետ սեփականատիրոջը պատկանելիության կամ ոչ պատկանելիության ապացույցի մեջ:

23.3.5. Տեխնիկական փորձաքննության անցկացումը կազմակերպվում է Համակարգի Օպերատորի կողմից՝ շահագրգիռ կողմի գրավոր դիմումի հիման վրա:

23.3.6. Վեճի մասին դիմումը ներկայացվում է Համակարգի Օպերատորին գրավոր ձևով՝ դիմումատուի անվանման, վիճելի էլեկտրոնային փաստաթղթի անվանման և վավերապայմանների, դիմումատուի պահանջների, հանգամանքների, որոնցով հիմնավորում է դիմումատուն իր պահանջները, դիմումին կից փաստաթղթերի ցանկի նշմամբ: Դիմումին կցվում է նաև փորձագիտական հանձնաժողովում ներառելու համար առաջարկվող դիմումատուի պաշտոնատար անձանց ցուցակը:

23.3.7. Տեխնիկական փորձաքննության անցկացման համար Համակարգի Օպերատորը ստեղծում է Համակարգի Օպերատորի կողմից և յուրաքանչյուր շահագրգիռ կողմից հավասար քանակությամբ սակայն ոչ պակաս երկու ներկայացուցիչ ներառող հանձնաժողով: Կողմերի համաձայնությամբ հանձնաժողովի կազմում ներառվում են շահագրգիռ կողմերի անվտանգության ծառայությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի կազմում կարող են ներառվել անկախ տեխնիկական փորձագետներ:

23.3.8. Համակարգի Օպերատորը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ծանուցել քննարկվող փաստաթղթին կամ հարցին առնչություն

ունեցող բոլոր կողմերին փորձաքննության վայրի և ժամանակի ու փորձագիտական հանձնաժողովի կազմի մասին:

24.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24.1. Մասնակիցների հետ կնքվող մասնակցության պայմանագրով կարող են նախատեսվել դրույթներ, որոնք սահմանված չեն սույն Կանոններով:

24.2. Մասնակիցների հետ կնքված պայմանագրերի և Համակարգի Կանոնների միջև հակասություններ առաջանալու դեպքում, հիմք է ընդունվում Համակարգի Կանոնների դրույթները, եթե Համակարգի Օպերատորի և Մասնակցի միջև երկկողմանի գրավոր համաձայնություն ձեռք չի բերվում նախապատվությունը տալ պայմանագրային դրույթներին:

25.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

25.1. Սույն Կանոններին կից ներկայացված հավելվածները հանդիսանում են «ԹԵԼՍԵԼ» Համակարգի Կանոնների անբաժանելի մասը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 հոկտեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

ՀՀ տարածքում փոխանցումների համար՝

ՀՀ դրամով կատարվող փոխանցումներ	**1% փոխանցվող գումարից**
ԱՄՆ դոլլարով կատարվող փոխանցումներ	**1% փոխանցվող գումարից**
ԵՎՐՈ-ով կատարվող փոխանցումներ	**1% փոխանցվող գումարից**
ՌԴ ռուբլով կատարվող փոխանցումներ	**1% փոխանցվող գումարից**

ՀՀ տարածքից դուրս փոխանցումների համար՝

ՀՀ դրամով կատարվող փոխանցումներ	**1.2% փոխանցվող գումարից**
ԱՄՆ դոլլարով կատարվող փոխանցումներ	**1.2% փոխանցվող գումարից**
ԵՎՐՈ-ով կատարվող փոխանցումներ	**1.2% փոխանցվող գումարից**
ՌԴ ռուբլով կատարվող փոխանցումներ	**1.2% փոխանցվող գումարից**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 հոկտեմբերի 2015 թ. № 38-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

Telcell

ԹԵԼՍԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
Հեռ՝ (+374 60) 27-22-23, էլ. փոստ՝ info@tel-cell.am , Վեբ կայք՝ www.tel-cell.am
TELCELL MONEY TRANSFER SYSTEM
Tel. (+374 60) 27-22-23, email՝ info@tel-cell.am, Web page www.tel-cell.am

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ (ՄԱՍՆԱԿՑԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԾԱԾԿԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՅՏ

Սույնով խնդրում ենք գրանցել և շնորհել անհատական ծածկագրեր **ԹԵԼՍԵԼ Համակարգում** աշխատելու համար _____ հետևյալ ստորաբաժանմանը (ստորաբաժանումներին):

(Մասնակցի անվանումը)

Երկիր	Մարզ	Քաղաք	Ծածկագիրը ցանցում	Փոխանցման արժույթը	Մասնակցի (մասնաճյուղի, ստորաբաժանման) անվանումը	Հասցեն	Հեռախոս	Աշխատանքի ժամերը (տեղական ժամանակը)	
								Աշխատանքային օրեր Երկ-ուրբ	Հանգստյան օրեր Կիր-շաբ

_____ (Ղեկավարի պաշտոնը) _____ (Ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ)

Մասնակցի կնիք

Տրվել է 01.10.2015

ՀԱՎԵԼՎԱԾ 3
«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 հոկտեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

Telcell

ԹԵԼՍԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
Հեռ՝ (+374 60) 27-22-23, էլ. փոստ՝ info@tel-cell.am , Վեբ կայք՝ www.tel-cell.am
TELCELL MONEY TRANSFER SYSTEM
Tel. (+374 60) 27-22-23, email՝ info@tel-cell.am, Web page www.tel-cell.am

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՅՏ

Մասնակից՝ _____ պատրաստ է սկսել աշխատանքը ԹԵԼՍԵԼ Համակարգում
(մասնակցի անվանումը)

սկսած՝ _____.20__թ-ից:

Տեղեկատվություն հետադարձ կապի և լիազոր աշխատակիցների վերաբերյալ, ԹԵԼՍԵԼ Համակարգում համագործակցության և Համակարգում կատարվող փոփոխությունների վերաբերյալ ծանուցումների ստացման համար:

Մասնակցի ստորաբաժանումը	Ա.Ա.Հ	Պաշտոն	Հեռախոսահամար, էլ. փոստ

_____ _____ _____
(Ղեկավարի պաշտոնը) (Ստորագրություն) (Ա.Ա.Հ)

Մասնակցի կնիք

Տպվել է 01.10.2015

ՀԱՎԵԼՎԱԾ 4
«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 հոկտեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

ԹԵԼՍԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
Հեռ՝ (+374 60) 27-22-23, էլ. փոստ՝ info@tel-cell.am , Վեբ կայք՝ www.tel-cell.am
TELCELL MONEY TRANSFER SYSTEM
Tel. (+374 60) 27-22-23, email՝ info@tel-cell.am, Web page www.tel-cell.am

ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՅՏ

Մասնակից՝_____ խնդրում եմ

☐ Ժամանակավորապես կասեցնել ստորև ցանկում ներկայացված ստորաբաժանման աշխատանքը ԹԵԼՍԵԼ Համակարգում մինչև _____.20__թթ:

☐ Դադարեցնել ստորև ցանկում ներկայացված ստորաբաժանման աշխատանքը ԹԵԼՍԵԼ Համակարգում՝_____.20__թթ:

Երկիր	Մարզ	Քաղաք	Ծածկագիրը ցանցում	Փոխանցման արժույթը	Մասնակցի (մասնաճյուղի, ստորաբաժանման) անվանումը	Հասցեն	Հեռախոս	Աշխատանքի ժամերը (տեղական ժամանակը)	
								Աշխատանքային օրեր Երկ-ուրբ	Հանգստյան օրեր Կիր-շաբ

_____ (Ղեկավարի պաշտոնը)

_____ (Ստորագրություն)

_____ (Ա.Ա.Հ)

Մասնակցի կնիք

Տպվել է 01.10.2015

ՀԱՎԵԼՎԱԾ 5
«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 նոյեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

Telcell

Շնորհակալություն ԹԵԼՍԵԼ դրամական փոխանցումների համակարգից օգտվելու համար
Անվճար թեժ գիծ՝ (+374 60) 27-22-23, Վեբ կայք՝ www.tel-cell.am
Thank you for choosing TELCELL money transfer system
Hot line: (+374 60) 27-22-23, Web page՝ www.tel-cell.am

ԹԵԼՍԵԼ Համակարգ
Դրամական միջոցների փոխանցման հայտ N _____ Ամսաթիվ՝ __/__/20__թ

Ես՝ ___անուն, ազգանուն___, ծնված թիվ՝ օր/ամիս/տարի, (անձնագիր տվյալներ), հասցե _____, հեռախոս՝ _____

Խնդրում եմ Համակարգի մասնակից __(մասնակցի անվանումը)__ կատարել դրամական միջոցների փոխանցում հօգուտ (ստացողի անուն ազգանուն, ծննդյան ամսաթիվ) ՝ հետևյալ գումարի չափով՝

Փոխանցման հասցեն՝ _____

ԳՈՒՄԱՐԸ ԹՎԵՐՈՎ	ԱՐԺՈՒՅԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐԸ ՏԱՌԵՐՈՎ

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. Գումարը ենթակա է ստացման ԹԵԼՍԵԼ համակարգի յուրաքանչյուր մասնակցի և նրա հետ համագործակցող վճարային համակարգերի սպասարկման կետերից:
2. Հաճախորդը ինքնուրույն է տեղեկացնում Ստացողին փոխանցման վերաբերյալ տեղեկությունը՝ ներառյալ փոխանցման կոդը:
3. Փոխանցող և Ստացող Մասնակիցները պատասխանատվություն չեն կրում ոչ ճիշտ տվյալների դեպքում գումարի չվճարման համար:
4. Ստացողի (շահառուի) կողմից չստացված փոխանցումը կարող է հետ պահանջվել Հաճախորդի կողմից:

Փոխանցողի կողմից վճարված միջնորդավճարը կազմում է _____(գումարը տառերով):

Հաճախորդի ստորագրություն _____

Մասնակցի Կնիք և աշխատակցի ստորագրություն _____

ՀԱՎԵԼՎԱԾ 6

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 նոյեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

Telcell

Շնորհակալություն ԹԵԼՍԵԼ դրամական փոխանցումների համակարգից օգտվելու համար
Անվճար թեժ գիծ՝ (+374 60) 27-22-23, Վեբ կայք՝ www.tel-cell.am
Thank you for choosing TELCELL money transfer system
Hot line: (+374 60) 27-22-23, Web page՝ www.tel-cell.am

ԹԵԼՍԵԼ համակարգ
Դրամական միջոցների ստացման հայտ՝ N _____ Ամսաթիվ՝ __/__/20__թ

Ես՝ ___անուն, ազգանուն___, ծնված թիվ՝ օր/ամիս/տարի, (անձնագիր տվյալներ), հասցե _____,

Խնդրում եմ Համակարգի մասնակից (մասնակցի անվանումը) վճարել ինձ հաճախորդի անուն ազգանուն կողմից՝ ԹԵԼՍԵԼ Համակարգի միջոցով փոխանցված գումարը՝

ԳՈՒՄԱՐԸ ԹՎԵՐՈՎ	ԱՐԺՈՒՅԹԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	ԳՈՒՄԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՎ

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. Գումարը ենթակա է ստացման «Տանդեմ Տրանսֆերս» համակարգի յուրաքանչյուր մասնակցից և նրա հետ համագործակցող վճարային համակարգերից:
2. Հաճախորդը ինքնուրույն է տեղեկացնում Ստացողին փոխանցման վերաբերյալ տեղեկությունը՝ ներառյալ փոխանցման կոդը:
3. Փոխանցող և Ստացող Մասնակիցները պատասխանատվություն չեն կրում ոչ ճիշտ տվյալների դեպքում գումարի չվճարման համար:
4. Չստացված փոխանցումը կարող է հետ պահանջվել Հաճախորդի կողմից:

Հաճախորդի ստորագրություն _____

Մասնակցի Կնիք և աշխատակցի ստորագրություն _____

ՀԱՎԵԼՎԱԾ 7

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 02 նոյեմբերի 2015 թ. № 39-Լ
հրամանով հաստատված «ԹԵԼՍԵԼ» համակարգի կանոնների

Telcell

Շնորհակալություն ԹԵԼՍԵԼ դրամական փոխանցումների համակարգից օգտվելու համար
Անվճար թեժ գիծ՝ (+374 60) 27-22-23, Վեբ կայք՝ www.tel-cell.am
Thank you for choosing TELCELL money transfer system
Hot line: (+374 60) 27-22-23, Web page՝ www.tel-cell.am

Համակարգի _____մասնակցին՝

Հաճախորդի անուն ազգանուն

Անձնագրային տվյալներ

հեռախոսահամար

Դիմում

Խնդրում եմ չեղարկել և վերադաձնել__/__/20__ թին N _____ հայտով կատարված դրամական փոխանցումը.

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ	ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐ	ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ՏԵԼՍԵԼՈՒՄ

Իմ կողմից դրամական միջոցների փոխանցման նախնական ուղարկումը հավաստող տեղեկատվություն չտրամադրելու դեպքում կամ կանխավ կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքում ես զգուշացված եմ և գիտակցում եմ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին:

Հաճախորդի ստորագրություն _____

Մասնակցի Կնիք և աշխատակցի ստորագրություն _____